№ 170 Սեպտեմբերի 27 (Հոկտեմբերի 9) 1880 Սեպտեմբերի 27 (Հոկտեմբերի 9) № 170

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ".

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան թուրքերը: Ներքին տեսութիւն: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Արևելեան գործեր: Յունաստան: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: Նամակ Թիֆլիսից:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ: Բանասիրական: Գրականական նկատողութիւններ:

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ

—

Ոչ մի տեղ չը կայ Կովկասում և Անդրկովկասում որ դարերով այն աստիճան անշարժ լինէր, որքան մեր թուրքերը: Թուրքերից գրեթէ չը կան գիմնազիաներում, իսկ եթէ մի քանի անհատներ կան այդ դպրոցներում, նրանք գրեթէ երբէք ուսում չեն վերջացնում, այլ հասնում են շատ շատ մինչև չորրորդ կամ հինգերորդ դասատուն: Նրանք իրանք էլ դպրոցներ չունեն, նանք չեն ձըգտում բարձրագոյն ուսմունք:

Թուրքը ապրելով ռուսաց տիրապետութեան տակ, հայի և վրացու հետ միասին, ոչինչ օրինակ չէ վեր առնում իր հարևան ցեղերից և ինչ որ էր մի քանի դարեր սրանից առաջ, նոյնը մնում է և այժմ: Թուրքի բարք ու վարքը նոյն վայրենի, անկիրթ է մնում: Աւազակութիւն, սպանութիւն, գողութիւն, մոլեռանդութիւն, անշարժութիւն, նախապաշարմունք,—ահա մեր երկրացի թուրքերի յատկանիշը: Անդրկովկասեան բանդերը մեծ մասամբ մահմետականներով են լցված:

Գուցէ մեր թուրքերի անշարժութեան և դէպի քաղաքակրթութիւնը նրանց ունեցած անընդունակութեան գլխաւոր պատճառներից մինն այն է, որ թուրքերի մէջ կանանց սեռը բոլորովին անտարբեր է մնում, չէ մասնակցում ոչ թէ միայն հասարակական, բայց և ընտանեկան կեանքին: Եւ ճշմարիտ, որտեղ կինը ոչինչ չէ, որտեղ նա մարդու հետ հաւասարապէս չէ մասնակցում հասարակական և ընտանեկան կեանքին, այնտեղ հազիւ թէ կարող է որ և է առաջադիմութիւն լինել....

Մահմետականների մէջ կինը անհատ չէ, մարդկային էակ չէ, արարած չէ,—այլ մի առարկայ է, մարդու սեփականութիւն է, որից մարդը, ինչպէս մի առարկայից, եթէ ունեւոր է, կարող է երեք, չորս, հինգ, տաս հատ ունենալ: Պարզ է որ եթէ կինը առարկայ է և մարդու սեփականութիւն, բոլորովին աւելորդ է նրան որ և է ուսում, կրթութիւն տալ:

Այն ընտանիքը, որ բաղկացած է ոչ թէ մարդուց և կնոջից, այլ մարդուց և մի քանի կանանցից,—դա ընտանիք չէ կարող անուանվել: Թուրքերը ապրում են, ուրեմն, առանց ընտանիքի, իսկ եթէ ընդունենք որ ընտանիքն է հասարակական առաջադիմութեան, կիրթ բարք ու վարքերի աղբիւրը,—պարզ է, որ թուրքերը դատապարտված են մշտական անշարժութեան:

Այժմ կարծես թէ մեր թուրքերը, կամ գոնէ նրանցից մի քանի առաջադէմները կամենում են դուրս գալ այդ կորստաբեր դրութիւնից, դիտաւորութիւն ունելով հիմնել Թիֆլիսում մի օրիորդաց դպրոց մահմետական աղջկերանց համար:

Դորա հետևանքը ինչ կը լինի: Կինը երբ որ ուսում կը ստանայ, նա անհատապէս կը զարգանայ, այլ ևս չի լինի մի անբան կենդանի, կը զգայ իրան անկախ, Աստուծու ձեռքով մարդու հետ հաւասարապէս ազատ ստեղծված, ուրեմն կը սիրէ, կը պահանջէ իր համար անհատական ընտանեկան կեանք, այլ ևս չի ուզենայ մարդու սեփականութիւն, նրա առարկայ լինել, չի թոյլ տայ, չի համբերի որ մարդը ունենայ մի քանի հատ իրան նման առարկաներից, կը պահանջէ որ ընտանիքը կազմվի երկու անհատներից՝ մարդուց և կնոջից:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Լրագրական խօսքը մեր մէջ: Մեր ինտելիգենցիան և գաւառական թղթակցութիւնները: «Պսակի» աշխատակիցը և նրա մեղադրական ճառը: Վիճաբանութեան մի նոր միջոց: Պ. Պատկանեանի ապագայ ճանապարհորդական տպաւորութիւնները: Պ. Տիգրանեանցի բժշկական գրքերը:

—

Մեր հասարակական կեանքի ամենաթոյլ կողմերից մէկը անշուշտ բաղկանում է նրանում, որ լրագրական խօսքը դեռ չէ ստացել հասարակութեան աչքում այն մաքուր, սուրբ և անկողմնապաշտ նշանակութիւնը, որ նա վայելում է լուսաւորեալ ազգերի մէջ: Անձնականութիւն, ինտրիգաներ, կրքեր, ճշմարիտ է, գործում են ամեն տեղ, բայց ոչ մի լրագրութեան մէջ նրանք չեն հասնում այն կոպտութեանը, այն անշնորհ ծայրայեղութեանը, որքան մերի մէջ: Հայ մարդը դեռ չէ սովորել լրագրական խօսքի մէջ հասարակական բնաւորութիւն տեսնել, նա չէ սովորել պարտաւոր յարգանքով վերաբերվել դէպի այդ պատկառելի հասարակական ոյժը:

Դուք կը սխալվէք, եթէ կարծէք, թէ խաւար ամբոխին է միայն յատուկ այդ վայրենի հայեացքը՝ դուք կը գտնէք նրան մեր ինտելիգենցիայի մէջ, մեր առաջաւոր մարդիկների մէջ, խաւար ամբոխը դէպի լուսաւորութիւն առաջնորդող անհատների մէջ: Դուք կը գտնէք մինչև անգամ լրագրապետներ, որոնք ամենաանխիղճ կերպով ոտքի տակ տալով իրանց բարձր կոչումը, չեն պատկառում ծառայացնել իրանց անձնական կրքերին լրագրական խօսքը՝ այն վսեմ զէնքը, որով նրանք պէտք է պատերազմէին ամեն մի կրքի, ամեն մի հասարակական ախտի դէմ... Աջ ու ձախ հայհոյել, վայր ի վերոյ դուրս տալ, քաֆթառ տատմերների պէս բամբասել, աշխատել սրան վիրաւորել, նրան սևացնել, ցինիկաբար յիշոցներ թափել,—ահա այդպիսի պարոնների գործունէութեան պրոգրամը: Փոյթ չէ նրանց, թէ այդպիսի անվայել վարմունքով կարող են վիրաւորել ընթերցողի բարոյական զգացմունքը՝ նրանք թքում են դրա վրա: Թող բաւականացրած լինի միայն նրանց մի որ և է կեղտոտ կիրքը—էլ ուրիշ ոչինչ չէ հարկաւոր նրանց: Լրագրի էջերում ընթերցողների առաջ Ադամի հագուստով ման գալը նրանց համար սովորական բան է:

* * *

Գաւառներում կարծես ծաղրում են լրագրական խօսքը: Ամեն մի պատահական թղթակից, ինչպէս երևում է, իր սրբազան պարտականութիւնն է համարում ի չար գործ դնել այս կամ այն լրագրի հիւրասիրութիւնը: Բաւական է, որ մէկը միւսին ասեց, թէ աչքիդ վերևը ունք կայ, կամ թէ մի որ և իցէ կերպով «բեղամաղ» արեց նրա քեռու տղին, կամ խնամու փեսի սանահօրը,—վիրաւորված կողմը առանց երկար մտածելու պատրաստ է մի քանի սուր թէ բթամիտ խօսքերով շշպռել յանցաւորին, դուրս բերելով իրան ճշմարտութեան պաշտպան, իսկ նրան հասարակութեան վնասակար անդամ: Վերցրէք ինչ լրագրի համար որ ուզում էք և դուք կը համոզվէք, թէ որքան առատութեամբ, որքան անբարեխղճաբար են վարվում ընթերցող հասարակութեան հետ գաւառական թղթակիցներից (մանաւանդ պատահական) շատերը: Կիրք, նախանձ, ատելութիւն, կեղծաւորութիւն հնչում են նրանց հաղորդած տեղեկութիւնների մեծ մասից: Մէկը գրում է, օրինակ, Բագուից, թէ Աւագ Գրիգորեանցը հափազանց ընդունակ մանկավարժ է, իսկ միւսը բոլորովին հերքում է այդ միտքը, յայտնելով որ Բագուի ուսումնարանը ամենացաւալի վիճակի մէջ կը լինի, եթէ յիշեալ մանկավարժը շարունակի իր գործունէութիւնը: Մէկը հաղորդում է Հին-Նախիջևանից, թէ պ. Պռօշեանցը ամենայն ջանք գործ դրեց այնտեղի ուսումնարանը կարգի բերելու, միւսը նոյն տեղից գրում է թէ Թեմական տեսչի օգնականը ոչինչ գործ չը կատարեց: Մէկը գրում է Շուշուց թէ հոգաբարձու Բարան քրտինք է թափում ուսումնարանի պայծառութեան համար, իսկ միւսը նոյն պարոնի մասին այնպիսի սարսափելի բաներ է հաղորդում, որ դժուար չէ եզրակացնել, թէ Բարային ուսումնարանի շեմքն անգամ չէ կարելի թողնել: Մէկը Շամախուց փառաբանում է այնտեղի յաջորդ Թադէոս եպիսկոպոսի գործունէութիւնը, իսկ միւսը բացարձակ յայտնում է, որ սրբազանը բոլորովին անընդունակ լինելով իր պաշտօնի մէջ, կառավարութեան ղեկը յանձնել է իր «գերիմաստ» վարդապետին. թղթակիցը այդպէս սրբազանի քեֆին դիպչելով աշխատում է մի և նոյն ժամանակը նրա «խաթրը» առնել, աւելացնելով որ նորին սրբազնութիւնը հանգիստ ապրել է սիրում և շատ «միամիտ» մարդ է... Մէկը գրում է Բագուից, որ գրապաշ Մելիք-Մուսեանցը անընդունակ է իր պաշտօնի համար, միւսը զըրպարտութիւն համարելով այդ «անհեթեթ» լուրը գրապաշի պատուին պաշտպան է հանդիսանում: Մէկը գրում է Դավրէժից, որ այնտեղի դպրոցները հարցաքննութիւնների ժամանակ ոչ մի յառաջադիմութիւն ցոյց չը տուին, իսկ միւսը «ճըշմարտութիւնը վերականգնելու համար» հաղորդում է, որ լրատուն դպրոցների քննութիւնների ոչ մէկին ներկայ չէ եղել...

Բերած օրինակներից պարզ երևում է, որ ընթերցողը երբէք չէ կարող որքան և իցէ որոշ հասկացողութիւն կազմել այս կամ այն անձի գործունէութեան մասին: Ում հաւատալ՝ Թաթոսին թէ Մաթոսին. ոչ խմբագրութիւնը, ոչ ընթերցողը և ոչ հասարակութիւնը չեն կարող վճռել այդ հարցը: Այսպիսով դուրս է գալիս, որ գաւառական թղթակցութիւնները բոլորովին կորցնում են իրանց նշանակութիւնը. նրանք փոխանակ ծանօթացնելու հասարակութեանը այս կամ այն անձնաւորութեան գործունէութեան հետ, բոլորովին մոլորութեան մէջ են գցում նրան: Բացի սրանից այդպիսի թղթակցութիւնները սուտ և սխալ տեղեկութիւններ հաղորդելով, կարող են վայր գցել ամբողջ հայ հասարակութեան առաջ այս կամ այն գուցէ և շատ արժանաւոր հասարակական գործողի վարկը:

Ժամանակ է վերջապէս հասկանալ, որ լրագիրը անձնական շահերի և կեղտոտ կրքերի ներկայացուցիչ չէ՝ նա հասարակութեան օրգան է և ոչ մի անձնական տարր երբէք տեղ չը պէտք է ունենայ նրա մէջ: Նրա նշանաբանն է՝ ճշմարտութիւն, անկողմնապահութիւն և հասարակական օգուտ: Խաղալ նրա խօսքի հետ, ծառայեցնել նրան մասնաւոր շահերին,—ամենաստոր բարոյական յանցանք է:

* * *

«Պսակ» լրագրի № 22-ում տպված է մի յօդուած՝ «Էջմիածինը ինչպէս ազգային կեդրոն» (կենտրոն) վերնագրով: Դա մի մեղադրական ճառ է, որ ուղղած է այն «ազգակործան ընթացքի դէմ, որին հետևում են մասնաւոր անձինք և մանաւանդ «Մշակը:» «Ազգակործան» պ. յօդուածագիրը անուանում է այն յարձակողական դիրքը, որ ընդունել է «Մշակը» Էջմիածնի անգործունէութեան դէմ: Ցոյց տալով Էջմիածնի պատմական նշանակութիւնը, նրա դերը մեր ազգի անցեալ և ներկայ կեանքի մէջ, յօդուածագիրը գալիս է այն եզրակացութեան, որ Էջմիածինը, ինչպէս ազգային կենտրոն, պարունակում է իր մէջ ազգի գոյութեան ապահովութիւնը, որ նա ազգի հիմն է և ամբողջ հայութեան պահպանողը: Էջմիածնի այս վսեմ կոչումը աչքի առաջ առնելով յօդուածագիրը բարկութեան շանթեր է թափում «Մշակի» և Էջմիածնի վրա ուրիշ յարձակվողների գլխին և հաստատ յոյս է յայտնում, որ «այսպիսիներին անէծքով պէտք է յիշատակէ արդարադատ ապագան:»

Ինչ մոլորութիւն! Ինչ աններելի երեխայամտութիւն! Միջնադարեան թթուած սոփեստականութիւնով ասպարէզ դուրս գալ մի այդպիսի ծանր հարցում՝ եթէ ոչ ուրիշ բան, գոնէ ծիծաղելի ան-

Այդպիսով մահմետական ընտանիքը հետզհետէ կը ստանայ անհատական, մարդավայել, գիտակցական կերպարանք և սրա և նա դրդիչ կը դառնայ մեր թուրք ազգաբնակութեան մտաւոր, բարոյական և տնտեսական զարգացման:

Ի հարկէ, ինչպէս ասում է առածը, մէկ ծաղիկով գարուն չէ լինում, Թիֆլիսի մէջ հիմնուած մի օրիորդական դպրոցը վերև յիշուած բոլոր հրաշքները յանկարծակի չէ կարող կատարել, բայց մեծ բան է որ այդ դպրոցի հիմնարկութեամբ սկիզբը կը դրուի նոր բարոյական կեանքի Անդրկովկասի թուրք ազգաբնակութեան մէջ: Իսկ Անդրկովկասի միւս քաղաքների թուրքերը թող հետզհետէ հետևեն Թիֆլիսի իրանց կրօնակիցների գովելի օրինակին:

Գ. Ա.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 սեպտեմբերի

Պարտաւորութիւն եմ համարում յայտնել որ «Մեղու Հայաստանի» № 73 մէջ տպած նամակը Աբրահամ Ամիրխանեանց ստորագրութեամբ՝ կատարելապէս կեղծ է: Ես դիտաւորութիւն չունեմ պ. Սիմէօնեանցի հետ լրագրական պօլեմիկ անել, բայց բացատրութիւն կը պահանջեմ նորանից օրէնքով:

Աբր. Ամիրխանեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուշադրութիւն ենք դարձնում «Մշակի» ներկայ համարում տպած պ. Ամիրխանեանցի նամակի վրա: Ուրեմն Սիմէօնեանց ուրիշներին մեղադրում է որ կեղծ նամակներ են տպում միայն այն նպատակով, որ իր արածը ծածկէ, այսինքն ծածկէ որ ինքն է այդ բանը անում: Այդ մեզ յիշեցնում է մեծ քաղաքների ժուլիկներին, որոնք իրանք մի բան են գողանում, բայց որ ուշադրութիւն չը դարձնեն նրանց արած գողութեան վրա, իրանք սկսում են իսկոյն աղաղակել՝ «գող, գող, գողին բռնեցէք» և սկսում են վազել իբր թէ գողին բռնելու համար, այն ինչ գողերը իրանք են: Ուրեմն ինչ որ Սիմէօնեանցը Գրիգոր Արծրունու վրա է գրել իր բաց նամակում, նա իսկապէս իր անձի նկարագիրն է արել այդ նամակի մէջ: Կաշխատենք տպել «Մշակի» մէջ Սիմէօնեանցի նամակը, որպէս զի ընթերցողները ծանօթանան պարոնի բարոյական իսկական պատկերի հետ:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները, որոնք հաղորդած են սեպտեմբերի 18-ից:

Հեռագիրը երէկ երեկոյեան մի քանի լուրեր հաղորդեց, որոնցից երևում է, որ ոչ թէ միայն Դուլցինիօի գործը նորից յետաձգվում է, այլ որ մինչև անգամ Եւրոպական միջամտութիւնը կատարեալ անաջողութեան է հանդիպում:

Լօնդօնից հաղորդում են, որ Դուլցինիօի դէմ գործողութիւնների սկսելը յետաձգուած է և որ պետութիւնների մէջ արագ բանակցութիւններ են կատարվում: Րագուզայից տուած հեռագիրը հաղորդեց, որ Չերնոգորիան գործնական օգնութիւն է խնդրում նաւատորմից: Միայն Անգլիան և Ռուսաստանը համաձայն են հասցնել այդ օգնութիւնը:—Միացեալ նաւատորմը կը հեռանայ Րագուզայից: Վիէննայի մէջ դեռ երէկ կարծում էին, որ բոլորը կը վերջանայ պետութիւնների անաջողութեամբ:

Անկասկած է, որ Բ. Դուռը խաբեց Եւրոպային և ստիպեց նրան բաւական ծաղրալի դեր խաղալ: Եւրոպայի բարոյական ճնշումը Բ. Դրան վրա ոչինչ հետևանք չունեցաւ: Թիւրքիան հրաւիրեց Եւրոպային ընդդիմադրել իրան, հաւատացած լինելով, որ այդ հրաւէրը չի ընդունվի:

Միացեալ նաւատորմը Րագուզայի մէջ այլ ևս գործ չունի: Նաւատորմին մնում է միայն կամ բոլորովին հեռանալ, կամ Եւրոպայի առաջաւոր ոյժը դառնալ և բարոյական ճնշումը փոխել գործնական ճնշումի:

Բայց կը կամենա՞յ արդեօք Եւրոպան այդպիսի քայլ անել: Այս հարցին կարելի է բացասական պատասխան տալ, եթէ ի նկատի առնենք այն դժուարութիւնները, որոնք առաջացան Եւրոպական համաձայնութիւնը կայացնելու ժամանակ: Քաղաքական այդ կատակերգութիւնը չափազանց վիրաւորեցուցիչ է Եւրոպայի պատւի համար:

Պէտք չէ մոռանալ, որ Եւրոպայի միջամտութեան սկզբնապատճառը Անգլիան է և որ այդ անաջողութիւնը չափազանց վատ հետևանքներ կունենայ Գլադստոնի մինիստրութեան համար, իսկ Անգլիայի այժմեան կառավարիչները այնպիսի մարդիկ չեն, որոնք կարող են անվրդով համբերել Բ. Դրան վիրաւորանքը: Պէտք է ի նկատի առնել, որ բացի անգլիական կառավարութենից գուցէ ուրիշներն էլ այդ անցքը Եւրոպայի հանգստութեան համար վտանգաւոր կը համարեն և բոլոր միջոցները գործ կը դնեն այդ վտանգի առաջն առնելու համար:

Կարող է պատահել, որ միացեալ նաւատորմի Րագուզայից հեռանալու ժամանակ կը յայտնվի, որ Անգլիան մտադիր չէ ներել Բ. Դրան յանդգնութիւնը: Անգլիական կառավարութիւնը կարող է հրամայել ծովակալ Սէյմուրին մնալ Ադրիական ծովի մէջ և չերնոգորցիներին պահանջած օգնութիւնը հասցնել: Այս դէպքում անգլիական նաւերը կարող են տեղափոխել չերնոգորցիներին ծովային ճանապարհով և բացի այդ, նաւերի վրա գտնված զօրքերը կարող են ափը իջնել: Այդպիսով միւս պետութիւնները ստիպւած կը լինեն կամ լուռ վկաներ լինել և կամ մասնակցել Անգլիայի գործին:

Անտիվարիից «Standard» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը սեպտեմբերի 23-ից:

Ալբանացիները, վերջին տեղեկութիւնների համեմատ, չափազանց ամրացած դիրքեր ունեն: Նրանց թիւը հասնում է 15,000-ի: Բայց Դրաւօգայի մէջ կարծում են, որ ալբանացիները 5 կամ 6 հազարից աւելի չեն: Նրանցից մի մասը պահպանում է ճանապարհները, որպէս զի չերնոգորցիները չը կարողանան անցնել, միւս մասը կենտրոնացած է Դուլցինիօի մօտ: Ասում են, որ ալբանացիների դիրքերը այնպէս են ամրացած, որ չերնոգորցիները նրանց վերցնելու ժամանակ մեծ կորուստներ կը կրեն: Չերնոգորցիների համար շատ ձեռնտու կը լինի, եթէ միացեալ նաւատորմը ծովային ճանապարհով կը տեղափոխէ նրանց Դուլցինիօ: Ալբանացիները սպառնում են որ այդ դէպքում նրանք քաղաքը կայրեն: Այդպիսով չերնոգորցիները Եւրոպայի օգնութեամբ միայն աւերակներ կը ստանան: Ալբանական նշանաւոր ցեղերի ներկայացուցիչները հեռացել են Դուլցինիօից, այնպէս որ քաղաքը պաշտպանվում է տեղացի մահմետականներից, որոնք մեծ յոյս ունեն Րիզա փաշայի օգնութեան վրա: Ալբանացիները թէ քրիստոնեայ և թէ մահմետական բնակիչներից պաշարներ են խլում. ուրիշ տեսակ վնասներ նրանք ոչ ոքի չեն հասցնում: Չերնոգորիայի վրա յարձակվելու մասին ալբանացիները չեն էլ մտածում:

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լօնդօնի «Daily News» լրագրին սեպտեմբերի 3-ից գրում են հետևեալը Աթէնքից:

Ներկայումս Յունաստանը 25,000 պատրաստի զօրք ունի, իսկ մինչև սեպտեմբերի

---

հնատեսութիւն է: «Շատ յարմար միջոց է այժմ «Մշակի» վրա յարձակվել և նրա նշանակութիւնը վայր գցել,—մտածել է «Պսակի» «ազգասէր» աշխատակիցը. ես գիտեմ որ հասարակութեան բոլոր հասկացող մասը համակրում է այդ լրագրին և իմ խօսքերը նրա մէջ միայն ծիծաղ կը յարուցանեն. լաւ էն է մի քիչ գրգռեմ հասարակութեան մնացած մասը: Դէ, լսեցէք, հայ քրիստոնեաներ: Լաւ լսեցէք, ուստա Համբարձում, խնամի Հերօ, սանահեր Դամբոսս, մահտեսի Ասօ, տիրացու Առաքել! Մեր սիրելի ազգը, մեր սուրբ լուսաւորչական կրօնը կործանվելու վրա են: Վայ մեզ նեռը դուրս է եկել....«Մշակ» լրագիրը (անիծելի նա) ինքը անաստուածաբար «փարմասոն» դառնալով, ամենայն աշխատութիւն գործ է դնում բոլոր հայութիւնն էլ իր հետ բողոքական եկեղեցու ծոցը տանել.... Այդ նզովեալ լրագիրը իր սաղայելական նպատակը գլուխ բերելու համար ամբողջ ինը տարի չէ դադարում յարձակվել մեր հնադարեան Մայր Էջմիածնի վրա. Լուսաւորչու սուրբ Աթոռի վրա....Նրա բոլոր յարձակմունքները ինչ կարծիք որ սուտ և անարդար են. Էջմիածինը, պատուելի ժողովուրդ, միթէ կարող է երբ և իցէ սխալվել.—այդ խօ բոլորդ էլ գիտէք: Բանը նրանումն է, որ այդ ազգակործան լրագիրը յարձակվելով Էջմիածնի վրա, աշխատում է կորցնել նրա նշանակութիւնը ամբողջ ազգի առաջ, աշխատում է հետզհետէ պաղեցնել հայութիւնը դէպի Մայր Աթոռը, որ դրանով աւելի հեշտ լինի խլել նրան լուսաւորչական եկեղեցու գրկից.... Հասկացաք.... Դէ որ հասկացաք, եկէք միաբերան անիծենք այդ կրօնափոխ և հերետիկոս լրագրին և ձէն ձէնի տուած գոռանք՝ Անաթեմա, նզովեալ եղիցի!!....»

Այդպէս էք մտածել, պ. յօդուածագիր, այնպէս չէ: Զօրա փաստարան էք եղել, ես ու իմ Աստուածը՝ ձեր մայրը ձեզանից պէտք է մի տասը հատ բերած լինէր....

Բայց իմացէք, որ ինչքան էլ աշխատէք, ոչ ոքի չէք կարող խաբել. աչքակապութեան դարը անցել է: Այստեղ բանը լոյսի պէս պարզ է. ով որ գլխումը գոնէ մի մսխալ խելք ունի, նա հասկանում է բանի էութիւնը: «Մշակը» իր հրատարակվելու օրից մինչև այսօր, այո, չէ դադարում յարձակվել Էջմիածնի անգործունէութեան վրա, չէ դադարում հարուածել նրա անտարբերութիւնը, նրա անհոգութիւնը նշանաւոր ազգային գործերում և ամեն մի ճշմարիտ հայ, ճշմարիտ հայրենասէր, ազգութեան վրա ամեն մի մտածող բոլոր սրտով համակրում է «Մշակին», որովհետև պարզ տեսնում է և հաստատ համոզված է, որ նրա բռնած յարձակողական դիրքը բղխում է ոչ թէ ցածր անձնական հաշիւներից, այլ բարձր ազգասիրական ձգտումներից: «Պսակի» աշխատակիցն ինչպէս երևում է դեռ պէտք է հասկացնել այն ամենատարրական ճշմարտութիւնը, որ յարձակողական դիրքը լրագրութեան մէջ ունի իր միակ նպատակը արմատախիլ անելու այս կամ այն հասարակական սխալը, ուղղելու այս կամ այն մոլորութիւնը, դրդելու դէպի գործունէութիւն, զարթեցնելու թմրութիւնից, ուղղելու դէպի ճշմարտութեան ճանապարհը: Թող լաւ հասկանայ «Պսակի» աշխատակիցը, որ Էջմիածնի վրա բոլոր յարձակվողները, որոնց նա կարճամտութեամբ ազգակործան անուանում է, պարզապէս, գուցէ անհամեմատ աւելի են սիրում և պաշտում Լուսաւորչի սուրբ Աթոռը, քան թէ մի աչառլին խումբ այն պարոնների, որոնք առանց բանի էութիւնը հասկանալու, կուրացած բթալի պօչի պէս մէջ ընկնելով, պաշտպանողական ճառամարտութիւններ են փրթում աջ ու ձախ: «Մշակը» իր խոհակիցների հետ, լաւ հասկանալով Էջմիածնի մեծ բարոյական նշանակութիւնը ամբողջ հայութեան համար, նոյն իսկ այս պատճառով երբէք չէ կարող լռել, երբ Մայր Աթոռի գործունէութիւնը չէ համապատասխանում նրա բարձր կոչմանը,—չէ կարող լռել ոչ ոք, ոչ մի ճշմարիտ հայ, ոչ մի ճշմարիտ հայրենասէր, ոչ մի անհատ, որի կրծքում թպրտում է կենդանի, աշխոյժ, զգայուն սիրտ....

«Թող լսէ մանչը, անդամալոյծը»...

Շատ խորամիտ է երևում «Պսակի» աշխատակիցը: Նրա լօգիկական եզրակացութիւնները հիանալի են, աննման—սքանչելի են: Լսեցէք! Ի սէր Աստուծոյ, լսեցէք! «Ես համոզված եմ—ասում է նա—որ եթէ մինչև անգամ Էջմիածինը այսուհետև ոչինչ չանի, նա դարձեալ անմեղադրելի է. Նա այնքան գործել է ազգի համար, որքան չէր կարող գործել ոչ մի քաղաքական իշխանութիւն...» Որքան սրամտութիւն,՝ Որքան նուրբ, շլացնող բանիմացութիւն! Ուրեմն թող Մանկունիները թագաւորեն Էջմիածնում, թող ուսումնարանապատական հողերը սրա նրա ձեռքն ընկնեն, թող եկեղեցապատկան հարուստ սեպհականութիւնները կորչեն, թող ազգային ամեն մի շարժում արձագանք չը գտնի նրա մէջ, թող վերջապէս անարժան, տգէտ, անբարոյական եկեղեցականների թիւը օրէցօր աճի, ժողովուրդը—թող բարոյապաշտութեամբ և անտրտունջ համբերութեամբ լռի, պապանձվի այն հիման վրա, որ Էջմիածինը նրա համար անցեալում մեծ բարերարութիւններ է գործել! Ամենակոյր ֆանատիկոսն անգամ կը ծիծաղի, եթէ լսի այդ փայտէ լօգիկայի ծնունդը,—այդքանը բաւական է ասել...

Ինչ որ վերաբերում է «Պսակի» աշխատակցի այն մտքին, թէ Էջմիածինը քնած չէ, այլ շարունակում է իր «փրկագործութեան գործը» և ապահովում է ազգի ապագան Գէորգեան ճեմարանով,—մենք դրա մասին ոչինչ չենք ասի.... Блаженъ, кто вѣруетъ!...

⁂

«Պսակի» աշխատակիցներից չեմ կարողանում բաժանվել մէկը մէկից լաւ են: Այնտեղ ուր հարկաւոր է դատել, խօսել, հակառակորդի հայեացքներին սեպհական հայեացքներով ընդդիմադրել, մի խօսքով վարվել գրականապէս—այնտեղ աշխատակիցներից երկուսը ուղիղ ֆիզիքական ոյժով են հակառակում՝ չաքուչ ու դագանակ բարձրացնելով... «Գլուխդ կը ջարդեմ...», «Չաքուչ վեր կանեմ էնքան կը տամ որ...» Եւ երևակայում են թէ չափազանց սրամտութիւն են գործ դնում: Ողորմելի գրականութիւն! Ովքեր են գործում քո մէջ!...

⁂

Մենք մեծ բաւականութեամբ կարդացինք «Մշակի» և «Պսակի» մէջ բժիշկ պ. Տիգրանեանցի յօդուածները... Ոչ մի գիտնական դատողութիւններ այնքան չեն կարող նպաստել առողջապահական խնդրին, որքան բժշկի համեստ, հասկանալի և բուն—ժողովրդական կերպով տուած խորհուրդները: Պ. Տիգրանեանցը այդ գեղեցիկ հասկացել է և չէ կարելի չը ցանկանալ, որ նա շարունակի իր գրուածները առողջապահական զանազան հարցերի վերաբերութեամբ: Մեր կարծիքով նա աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէր. եթէ երբեմն կարդար նաև հասարակական դասախօսութիւններ:

⁂

«Մշակին» հաղորդել էին Նոր-Նախիջևանից, որ պ. Պատկանեանը ուղևորվում է Հայաստան ճանապարհորդելու դիտաւորութեամբ՝ խոստանալով գրականապէս հաղորդել հասարակութեանը իր տպաւորութիւնները: Ցանկալի կը լինէր, որ պարոնը որքան կարելի է «տնային» կերպով չը վարուէր ընթերցողի հետ, ինչպէս նա այդ անում էր «Փորձի» մէջ: Կան բաներ, որոնք հասարակութեան համար ոչ մի ինտերես չեն կարող ներկայացնել և այս պատճառով տպագրութեան երբէք չը պէտք է արժանի լինեն:

Օրինակ՝ պ. Սուլլիկի խորհուրդը բժշկապետ Յովհաննիսեանցին, որ նա Բօրժօմի իր պարտէզում այս կամ այն ծաղիկները տնկի, կարծեմ ուղիղ մասնաւոր նամակի նիւթ է...

Մօսկվա Ս. Դաղեանց